ՑՈՐԴՈՐԱԿ

Յաղագս Հաստատելոյ

ՀԱՅԿԵԱՆ ՃԵՄԱՐԱՆ

Ի մեծի մայրաքաղաքին Անգղիոյ՝ ի Լոնդոն։

1862 quarto 2.

ՅՈՐԴՈՐԱԿ

Յաշխարհս Հայաստանեայց

ՀԱՅԿԵԱՆ ՃԵՄԱՐԱՆ

Ի մեծի մայրաքաղաքին Անգղիոյ՝ ի Լոնդոն։

Տպագրեալ ի Տպարանի Մարդասիրական Ճեմարանի։

Ի կալկաթա, ի 1 Հոկտեմբերի, 1825։

ՊՈՒՌԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Նարեկացի Եղիսաբեթի ըստ ճանապարհաց իւրոց։
Եւ յորժամ ծերացայ՝ ոչ հեռեացի ի նոցանէ։
Առակ. 22. 6։

Ի Հիրաշ, ի 1 Յունվարի, 1825։

Ազգեալ Յովհաննէս Ավդալեանց,

Թանգ Պարոն,

Քաջալերեալ իմ ի փոխադարձ բարեկամէ մերմէ՝ ի Պարոն Մարտիրոսէ Մկրտիչ Դաւթեանց, համարձակիմ գրել առ քեզ զթուղթս զայս, թէպէտ և ոչէ իմ սովորեալ զքեզ բնաւին։

Պարոն Մարտիրոս Մկրտիչ Դաւթեանն արդէն ծանուցեալ է քեզ զաշխատասիրութիւն և զգործս իմ յայսմիկ երկրի։ Պարոնայք Հենրի Դրամմնդ՝ սեղանաւոր Ճէրմնդ Կրասայ՝ որ ի Լոնդոն, և Ջան Բէյֆորդ՝ գործակալ բժշկայ հասարակայ՝ որ ի Լոնդոն, առաքեալ են զիս ի Պաղեստին և ի Պարսիստան, առ ի քարոզել զաւետարանն Քրիստոսի Եբրայեցւոց բնակելոց Յաստրեստան և ի Պարսիստան։

Ցընթացս քարոզութեան իմոյ
'ի Պաղեստին և 'ի Ծոցն պարսկային, պատեհ
կոչեայ ծանօթանալ բաղում անձանց պատ-
ուելի ազգին Հայոց, Հանաչել զարժանաւոր-
ութիւնս նոցա, և գիտել զնախանձաւորութիւն
նոցա 'ի սէր քաղաքականութեան և կրօնի։
Թանգ Պարսն, ոչ են ինձ կամք դարձուցանել
զմարդիկ 'ի կրօնս յատկայեալ ինչ եկեղեց-
ւոյ, քանզի համարիմ զայնոսիկ ժողովուրդս,
որք ունին զՔՆ իբրև զհին հաւատոյ իւր-
եանց՝ և մկրտեալ են յանուն նորին, իբրև զեղ-
բարս՝ յիրաւի իբրև զսիրելի եղբարս 'ի ՑՆ
ՔՆ, որ է 'ի վերայ ամենեցուն Աստ օրհնեալ
մինչև յյաւիտեան։ Կամք և դիտաւորութիւ
իմն են միայն օգնել՝ որքան տայցէ ինձ Տէր
զկարողութիւն, օգնել ազգին Հայոց 'ի բա-
րեպաշտ և 'ի բարենախանձ աշխատասիրու-
թիւնս իւրեանց, առ 'ի տարածել 'ի միջի
իւրեանց առաւել առատութեամբ զգիտութիւն
Աստուծոյ, և յոլովցուցանել 'ի նոսա զլոյս
քաղաքականութեան։

Ընթերցեալ է իմ զգաստութիւն
Տեսութեայ ձերոյ, զորոյ զանունն չկարեմ
յիշատակել աստ առանց զգալոյ 'ի խորք

սրտի խնդրոյ զմեծարանս և զյարգութիւնս այն
բարեպաշտ այրն ԱՅ. հակայ ոմն էր նա ի
քարոզութիւն քրիստոնէութեան. աւանդեաց
նա ձեզ զսուրբ գիրս ի լեզու ազգին ձերոյ, և ի պէսպէս տեղիս ճանապարհորդութիւն
առնելով հաստատեաց զվարժարանս վասն
մանկանցն Հայկազանց։ Եւ մարթ է ասել զի
Հայք պարտական են զկնի ԱՅ աշխատասիրութեանցն Մեսրովբայ, և զկնի սորա աշխատանացն Ներսեսի Կլայեցւոյ, որ հրահանգեալ զօրայոյզ զազգն Հայոց բարեպաշտ գրոնածովք վարդապետութեան իւրոյ, և շարադրութեամբ աղօթից ժամակարգութեանց։ Հետևելով իմ օրինակին Մեսրովբայ, հաստատեալ եմ օգնականութեամբ և շնորհօքն ԱՅ, և ձեռնտուութեամբ Անգղիայի և Հայկազանց բարեկամաց զերկուս ուսումնարանս զմին ի Բասրայ, և զմիւսն ի Բուշեր. ուրանօր ուսանիցք և դասիցք Հայոց ուսանին զբանն ԱՅ, և զբարբառս Հայոց և Անգղիացւոց համեմատութեան և կարգի Բելայ և Լանկաստերայ։ Եւ թէպէտ երկոքին ուսումնարանքս այսոքիկ հաստատեալ են վասն մանկանց ծնողաց ամենայն ազգաց, սակայն արժան է ասել օր

խոստովանիլ 'ի գովութիւն և 'ի պարծանս Հայոց՝ յայնոսիկ երկուս քաղաքս բնակելոց, զի վերոյասացեալ երկոքին ուսումնարանքն Բասրայու և Բուշեռայ այժմ ուսուցանեն ըստ մեծի մասին զմանկունս Հայկազուն ծնողաց։ Ակնունիմ և յուսամ յանհուն ողորմութիւնն Աստ, զի երկոքին ուսումնարանքն որ 'ի ծոյն Պարսից, բորբոքեսցեն 'ի սիրտս ծնողաց այլոց ազգաց զհուր բարի և սուրբ նախանձաւորութեան, և այսուհետև սփիւռ տարածեսցեն զլոյս մշնջենական Աւետարանին և զլոյս քաղաքականութեան 'ի ծոյսն Պարսից՝ մինչև 'ի սահմանս երկրին Աղուանից։

Եւ քանզի մանկունքս այսոքիկ հրահանգին ուսմամբ Աւետարանին խաղաղութեան, 'ի զարգանալ հասակի իւրեանց ոչ յարուցանեն զպղմուկ և զխռովութիւն, այլ զխաղաղութիւն և զբարի կամս առ համազգիս և առ համասեռս իւրեանց, և եղիցին հզօր և անպարտելի ախոյեանք ճգեմ բրոնակալաց և նեղչաց իւրեանց։

Այլ սակայն մտածելով իմ զօգուտս և զպիտանութիւն հաստատելոյ զՀայկեան Շեմարան մի 'ի Լոնդոն, բազում տա-

ասելք յառաջ յառաջադրեալ եմ բարեկամաց և բարերարաց իմոց որք յԱնգղիա, առ 'ի օգնական լինել Հայոց ազգին 'ի հաստատել զայսպիսի Ճեմարան մի 'ի Լոնդոն 'ի պէտս մանկանց Հայկազանց։

Արժան է աստ յիշատակել, զի ոչ պարտաւորեսցին Թողուլ զԵկեղեցի իւրեանց Հայկազունքն այնոքիկ՝ որք յօժարակամ միոյթ յանձին կալցին հաստատել զՃեմարան մի 'ի Լոնդոն։ Առանց երիք արգելման ունիցիք անդանօր զարձակութիւն և զարտօնութիւն տալոյ մանկանց ձերոյ զուսումն աւետարանական և գիտնական, և ոչ ոք պարտաւորեսցէ զձեզ խոստովանիլ զձեզ լինիլ անդամք Եկեղեցւոյն Անգղիոյ, կամ ընդունիլ զիշխանութիւն այլոյ ուրուք պատրիարգի 'ի վերայ ձեր, եթէ ոչ միայն զիշխանութիւն հայրապետին ձերոյ՝ այսինքն կաթուղիկոսին Էջմիածնի. քանզի Անգղիայիք գիտեն և հաւատան էն, զի ոչ անուն Անգղիայոյ և ոչ անուն Հայկազնոյ առաջնորդեն մարդոյ յարքայութի երկնից, այլ գործնական և հաւատի գիտութիւն Յի Քրիստոսի։ Օրէնք Անգղիոյ թոյլ տայցեն ձեզ անփոփոխ պահել

զկարգ և զարարողութիւն աստուածային պաշտաման նախնի հայրապետաց ձերոց, և զիրաւունս կրօնի և եկեղեցւոյ ձերոյ, և զհաստատեալ կանոնս օրինադրութեան ձերոյ և զբնական հանգամանս անձին ձերոյ, և միանգամայն վայելել զամենայն օգուտս Անգղիական ուսումնականութեան և գիտութեան։

Դարձեալ՝ չունիք դուք կրել զհալածանս, զնեղութիւն և զնզովս Անգղիական եկեղեցւոյ։ կարէք արձակօրէն և աներկիւղ գրել և խոստովանիլ զՄեսրովբ, զՆերսէս Շնորհալին, զՕձնէցին, և զՀայրապետն ձեր՝ զԵփրեմ Լինիլ Հշմարիտ ծառայք ՅԻ ՔԻ, առանց լինելոյ ի վտանգի ընդունելոյ զանաթեմայս և զբանադրանս յեկեղեցւոյն Անգղլոյ։ Սմին իրի թոյլ տուք ինձ առնել ձեզ զյեռագայ յառաջադրութիւնս։

Ա։ Յառաջադրեցաւ զի Հայկազունքն բնակեալք ի Գալկաթա՝ կարգեցին զժողով մի հնգետասան անձանց, առ՝ ի խորհրդակցիլ սակս հաստատելոյ զՀայկեան Ճեմարան մի՝ ի Լոնդոն։

Բ։ Յետ հաւանութիւն տալոյ ժողովոյն այսոքիկ յառաջադրութեան, փոյթ յանձին կալան

ուղարկել ՅԱՆգղիա զմանկունս ոմանս յազգէն Հայոց, եթէ 'ի ջքաւոր և եթէ 'ի մեծաւոռն ծնողաց. և այնոքիկ մանկունք՝ որք ընտրեալ լինին 'ի ժողովոյն գնալ ՅԱՆգղիա վարման պարտին գիտել գրել և կարդալ Հայերէն։

Գ։ Ոմանք 'ի պատուաւոր Հայկազանց՝ եթէ 'ի վարդապետաց և եթէ 'ի քահանայից՝ պարտին ուղեկցութեամբ գնալ ընդ մանկանցն այնոցիկ ՅԱՆգղիա։

Դ։ Այնոքիկ անձինք և այնոքիկ մանկունք՝ որք առաքեսցին ՅԱՆգղիա հաւանութեամբ ժողովոյն՝ պարտին ընդունիլ 'ի ժողովոյն զթուղթս յանձնարարութեան 'ի վերայ յետագայ անձանց. ա, Հէնրի Դրամմէնդ աստուած, 49, Ճէրինդ կրաս, 'ի Լոնդոն. բ, Զան Բէյֆօրդ աստուած՝ գործակալ բժշկայ հասարակայ, 'ի Լոնդոն. գ, Զէմս Միլլար աստուած՝ առաջնադպիր Բրիթանական և այլազգական միաբանութեան դպրոցայ, 'ի Լոնդոն. զթուղթն Զէմս Միլլար աստուծոյ հաճեսջիք ներփակել 'ի թղթի Պարոն Դրամմէնդի, և զբրենակ նորա 'ի թղթի Պարոն Բէյֆօրդի։

Ե։ Նախ քան զչուռանն այնոցիկ մանկանցն ՅԱՆգ-

ղնա, Հաճեսջիք ապդ առնել զայն գրուք
Պարոնայք Բէյֆօրդի, Դրամէնդի և Մի-
լարի. սակայն ոչ պարտիք յապաղել առ 'ի
առաքել զմանկունսն մինչև ստանայցէք զպա-
տասխան Թղթոյ ձերոյ 'ի վերոյասացեալ Պա-
րոնայս. քանզի քաջ գիտեմ ես զզգայողութիւն
և զխորհուրդս նոցա. և հաստատի եմ յոյժ
զի Չանալոյ են նոքա ամենայն Չանասիրութիւն
և կարողութիւն իւրեանց առ 'ի գլուխս տանել
զառաջադրութիւն ձեր, հաստատելով զՀե-
մարան մի 'ի Լոնդոն։

Ե։ Եթէ ոմանք 'ի ծնողաց բնակելոց 'ի Կալ-
կաթա կամիցին ուղարկել զմանկունս իւրեանց
յԱնգղիա, գրեցէք Թուղթս վերոյասացեալ
Պարոնայս Դրամէնդի, Բէյֆօրդի և Միլլա-
րի, և յայտնեցէք նոցա զգումար դրամոյն, զոր
Հայկազուն բնակիչքն Կալկաթայ յօժարակամ
ունին տալ սակս հաստատութեան Հայկեան
Ճեմարանի մերոյ Անգղիա. միանգամայն և խնդ-
րեցէք 'ի Պարոնայս Դրամէնդէ, Բէյֆօր-
դէ և Միլլարէ, ժողովել զդրամս Անգղիա,
վասն հաստատութեան այսպիսի Ճեմարանի։
Զ։ Գրեցէք զթուղթ մի 'ի վերայ նոյն առ-
արկայի առ մեծապատիւ Լորդ Գիլֆօրդն

որ 'ի Լոնդոն, և ներփակեցէք զթուղթ սահ-
ցեալ ազնուականին 'ի թուղթս Պարոնայ Դը-
բամինդի և Մելլարի։

Է։ Հաճեսջիր գրել թուղթս առ Պրն Ղու-
կաս Յովսեփեան որ 'ի Բոմբայի, առ Պարոն
Մկրտիչ Զօհրապեան որ 'ի Մադրաս, առ
Պարոն Սէթ Թաառուրեան որ 'ի Թաւրէզ,
առ Պարոն Պետրոս Ստեփաննոսեան որ 'ի
Զուղայ, առ բարեկամս իմ՝ Պարոնայք Յա-
ռութիւն և Առաքել Կոստանդիանոսեան որ
'ի Բուշիր, առ Հայկազունս բնակեալս 'ի
Բասրայ և 'ի Հիրազ, և առ Հայկազուն-
ուր և գտանիցին. և յայտնեսնց զթուղթն Պրն
Մարտիրոսի Մկրտիչ Դաւթենց, և զթուղթն
իմ զոր գրեցի առ քեզ. և ծանո՛ նոցա զյա-
ռաջադրութիւնսն, զոր Հայկազուն բնակիչքն
Կալկաթայ ելեն արարեալ։

Ը։ Գրեցէք թուղթս ամենայն Պատրիարգայ
Ձերոյ, և յայտնեցէք նոցա զայսոսիկ յառաջա-
դրութիւնս տպագրութեամբ. և խնդրեցէք
զհաւանութիւն նոցա, զի առաքեսցեն զոմանս
'ի վարդապետաց իւրեանց առ Պարոնայք Դրա-
մինդ և Բէյֆօրդ յԱնգղիա, առնուլ 'ի վար-
ձու զտուն մի վասն ճեմարանին 'ի Լոնդոն,

և Ժողովել զդրամն յօգուտ Ճեմարանին. և յայտնել Պարոնայ Դրամինդի, Բէյֆօրդի և Միլլարի, թէ զորքան դրամն Հայկազունքն կարեն տալ 'ի հաստատութիւն յառաջադրեալ Ճեմարանին, միանգամայն և խնդրել զնպաստ և զօգնականութիւն առատաձեռն բարերարայ իմոյ՝ Պարոնայ Դրամինդի և Բէյֆօրդի ։

Թ ։ Խնդրեցէք 'ի բարեկամայ ձերոյ Ամուրեք, առ 'ի ձեռնամուխ լինիլ 'ի սկզբնաւորութիւն Ճեմարանին միանգամայն, առաքելով յամենայն տեղւոջէ զմի կամ զերկուս 'ի Հայկազուն մանկանց յԱնգղիա ։

Ժ ։ Գրեցէք զթուղթս Պարոնայ Քիսկ, Կինգ, Գուդել և Բըրդին, որք են Ամերիգայի միտոնարք և բնակին Յերուսաղէմ և են մտերիմ բարեկամք իմ։ և յայտնեցէք նոցա զյառաջադրութիւնս զայս՝ արարեալ 'ի Պարոն Մարտիրոսէ Մկրտիչ Դաւթեանց և յինէն, և խնդրեցէք 'ինոցանէ զի գրեսցեն նոքա զթուղթս յԱմերիգա, որով Ամերիգայի քրիստոնեայքն ուղարկեսցեն զնպաստաւորական տուրս իւրեանց առ Հէնրի Դրամինդ ասպետ որ 'ի Լոնդոն, վասն օգնականութեան յառաջադրեալ

Ճեմարանին որ 'ի Լոնդոն. քանզի անուն Պարոն Դրամէնդէն քաջայայտ է ամենայն քրիստոնէից յԱմերիգա բնակելոց. և նոքա ոչ ուներին ներհակութիւն ինչ բնաւին առ 'ի ուղարկել նմա զդրամն օգնականութեան։

Ժա։ Հաճեայ տալ զրուք հրատարակելոյ թուղթն Պարոն Մարտիրոսի Մկրտիչ Դաւթեանց և զթուղթն իմ՝ զորս գրեցաք առ քեզ. և յաւել 'ի նոսա զանուանս մեր երկոյունց։ զի Հայկազուն Պարոնայքն՝ որք ցանկայցեն թղթակցութիւն ունել լնդ Պարոն Մարտիրոսի Մկրտիչ Դաւթեանց և լնդիս՝ կարացեն գիտել զեղանակ գրելոյ զհասցէն նամակաց մերոց։

Պարոնայք, Ճանապարհորդեցի ես լնդ միջագետս, և անդանօր անցի ընդ Լերինս Մահալամեայ և լնդ լեառն Սենեարայ։ Բովանդակ բնակիչք երկոյունց լերանցն այնոցիկ էին Ասորի քրիստոնեայք. որք 'ի քարոզութեանց և 'ի վարդապետութեանց Եփրեմի Ասորւոյ և Յակոբայ Մծբնայ հայրապետի ուսեալ էին 'ի վաղնջուց աղօթել առ Յիսուս Քրիստոս՝ որ է ծնող մեր ամենաղորմ. որպէս և դուք ձայքդ ուսեալիք 'ի վարդապետութեանց

Ներսեսի Կայեցւոյ աղօթեալ առ Յն Քն՝
առ Տուրն այն կենդանի, որ բորբոքէ՝ ի սիրտս
մեր զՀուր սիրոյ իւրոյ։ Բայց սակայն բնա-
կիչքն լերանցն Մահալլամեայ և բնակիչքն
Սենասար լերին սակաւ փոյթ կալան առ՝ ի
ուսուցանել մանկանց իւրեանց զաւետաւոր բանս
սէր Աւետարանին. սակաւիկ մի հաՀեցան նոքա
ընդ վարդապետութիւն Յն Քի. սակայն որոյ-
հետև հաւատք նոցա ոչ էին արմատացեալ
՝ի սիրտս նոցա՝ իակ և իսկ յանցեան նոքա դայ-
թագղուելք սակս սիրոյն աշխարհի, յորժամ
եկին ՝ի վերայ նոցա հալածանք և նեղութիւն։
քանզի, ու

պետք և քահանայք նոցա, երէցք և կրտսերք նոցա ողջոյն եղեն Եղիտք. այսինքն՝ Ճշմարիտ երկրպագուք սատանայի. սակայն ես յուսամ և ակնունիմ տեսանել՝ ի ձեռն զբարեգոյն գործս, եղբարք իմ Հայկազունք. արդէն գործեալ է ձեր զբարի և զգովելի գործս, առ՝ի զարթուցանել Յազգի ձերում զսէր երկնային, և յարուցանել՝ ի նոսա զՀոգի Մեսրովբայ, Ներսեսի Կլայեցւոյ, Մովսիսի և Գրիգորի Լուսաւորչին ձերոյ։ Սիրելի եղբարք, այսպէս արարէք հանապազ, որով և եղիջիք լուսաւորք՝ ի մէջ ամ արևելեան քրիստոնէից. և ազգ ձեր պայծառապայլ ծաղկեսցի՝ ի ծագս աշխարհի։ Քաջալերեցարուք, զօրացարուք առ՝ի հաստատել զՃեմարանդ զայդ՝ ի Լոնդոն, և ես յուսամ և հաւատամ զի Տէր Աստ բնակեսցի՝ ի նմա, և փայլեսուցեսէ զլոյս երեսաց իւրոց՝ ի վերայ մանկանցն այնոցիկ, որք հրահանգեալ ուսանիցին՝ ի նոյն Ճեմարանի. և յաւուր միում դասեսցին նոքա՝ ի շարս այնոցիկ անձանց, որք յաղթեալ նուաճեսցեն զհակառակորդս իւրեանց ապացուցութեամբ Ճշմարտութեան Հոգւոյն սրբոյ. և եղիցին նոքա յաւուր յայնմիկ, յորժամ եկեսցէ արեգակն արդարութեան՝ ու-

նելով զբաժ շկութիւն 'ի վերայ թեռոց իւրոց, յայնմ հրաշափառ առուքն ասեմ՝ որդիք ձեր հրահանգեալք 'ի Ճեմարանն Լոնդոնայ, եղիջին 'ի շարս այնոցումն, որք ցուցեալ են բազմայ զՀանապարհ արդարութեան. և փայլեսցին իբրև զպայծառութիւն երկնից, և իբրև զշողշողուն աստեղս յաւիտեանս յաւիտենից։ Եւ որդիքն Հայկայ եղիցին մեծ առաջի Աստուծոյ, մեծ յարքայութեան։ Ողջոյն տուր 'ի դիմաց իմոց Գարոնայ Յովհաննիսի Յ. Աղանուրեանց, Յարութիւնի Գալուստեան, Պօղոսի Յորդանանեան, և Սարգսի Յ. Սարգսեան։

Մնամ, Թանգ Պատոն, քեզ բարեկամ

և եղբայր 'ի Քրիստոս՝

ՀՕՀԷՔ ԱՌԻԼՔ

Մեռոնոյ։

Որ տրտում է և ուռուցեալ՝ հոգ մեծ նոչէսցի յարքայութեան երկնից։ Մատթ. 4։ 5. հոմ. 19։

Յորդորակ

Առ պատուելի հաստատակութեան Հայկազանց։

Բնաբերս թնութիւն է մարդկային սեռի լինել բանաւոր. և յաղագս այնորիկ հարկ ի վերայ կայ ցուցանել յամենայն առթի զիւրն ներգործութիւն. սին երի ի սկսանել զգործ ինչ պարտի ընտրողութիւն ինչ կանխապէս առնել, և առաջնորդութեամբ լուսոյ բանին ընթանալ՝ կշռադատելով զպարագայս գործոյն՝ ի չարէն հրաժեշտ տալով հեռանալ, և զբարին սիրելով ընդգրկել։

Այլարդ՝ քաջածանօթ է ձեզ ամենեցուն ողբալի կացութիւն տառապեալ սերնդոյն Հայկայ. կորուսեալ եմք զթագաւորութիւն մեր, կորուսեալ եմք զազգային պատիւ և զփառս մեր, կորուսեալ եմք զինամակալու մայր մեր զՀայաստան. և խլեալ, կորզեալ, աքսորեալ, վտարանդեալ՝ ի լանջաց բնիկ երկրին մերոյ՝ ցիր և ցան սփռեալ

բնակիմք 'ի սահմանս օտար աշխարհայ, և պանդխտացեալ թափառիմք 'ի մէջ այլազգեաց։ Զրկեալ եմք յաղատուէ մերմէ, զրկեալ եմք յարգաւանդաւոր կալուածոց մերոց, միանգամայն և զրկեալ եմք յամենայն ընչից որք կարեն փառաւոր հանդիսացուցանել զորդիս Հայկայ։ վասնզի յերկիրս ստրկութեան։ ծանրացան 'ի վերայ պարանոցաց մերոց անուրք գերութեան։ ծանրացաւ 'ի վերայ մեր լուծ ծառայութեան՝ սաստկագոյն քան զլուծն նախնի Հաղարայեանց։ ծանրացան 'ի վերայ մեր շղթայք բռնաւորութեան՝ ծանրագոյն քան զբռնակալութիւն նախնի մոխրապաշտ Պարսից։ Եւ ոչ այսչափ միայն, այլ և որ առաւել ողբալին է, գոլով ընդերկար ընդ ի շխանութեամբ այլազգեայ՝ ոմանք 'ի մէնջ մոռացեալ են զբնիկ բարքս մեր, ոմանք օտարացեալ էն 'ի լանջաց մերոց։ սուրբ Եկեղեցւոյ։ և ոմանք, ամաչ ցաւելի տարաբախտութեանս, գոլով ընտելացեալ լծոյն ծառայութեան՝ գրեթէ մոռացեալ են թէ երբեմն էին ազատ և անձնիշխան։ և տեսեալ զնուաստացեալ կացութիւն ազգիս Հայոց՝ ամենք համարին կոչել զինքեանս Հայք։ զանուն մի ասեմ, որ

ով նախնիք մեր պարծանս համարէին կոչել զինքեանս ՝ի Ժամանակս Արշակունեան թագաւորացն մերոց. զանուն մի իմա, զոր պատուով արտասանէին մեծամիտ հռովմայեցիք, և որոց փառացն նախանձախնդիր էին ՝ի հնումն ամենայն ազգք աշխարհի։ Իսկ զի՞նչ է պատճառ այժմեան անշքութեան և նուաստութեան Արամեանս գրոհի. ո՞չ ապաքէն տգիտութիւն է գլխաւոր պատճառ նորին. որ ՝ի բառնալ ազատութեան և իշխանութեան ՝ի տանէս Հայկազանց, և ՝ի շինանել լուսաւոր գրագիտացն մերոց ՝ի յանկարծահաս մրրկաց հալածանաց նեղչաց մերոց, սկսաւ թագաւորել ՝ի միջի մեր խաւարամած մթութիւն. և զրկելով զմեզ ՝ի լուսափայլ շաւղէն իմաստութեան, խարխափեցուցանել զմեզ ՝ի լաբիւրինթոսս յիմարութեան և թշուառութեան։ Արդարև, տգիտութիւնն է տիրապետս մայր ամենայն մոլութեան, և թշնամի ամենայն հասարակաօգուտ և ազնիւ գործոց. եթէ լուսացնոցուղ ՝ն շրջել իմաստութեան յոլանային ՝ի Հայաստան, և եթէ Հեմիսք մեք ՝ի պայծառութեան գիտութեան և քաղաքականութեան, սոյնասարաս խլրտմունք ո՞չ արմատանային ՝ի մեզ. և զմեզ ո՞չ տեսա-

նէաք այսօր թափառական և գերիս 'ի վե-
րայ երեսայ հողագնտի. և ոչ տեսանէաք
զմայր մեր՝ զՀայաստան նստեալ 'ի գերուեա,
'ի թշուառութեան և 'ի սուգ տրտմութեա։

Եւ քանզի ունիմք մեք զբանա-
կանութիւն սեռին մերոյ, և տեսանեմք զմեզ
տարագրեալ 'ի ծոցոյ մօրս մեր Հայաստանի,
պարտ է մեզ ոչ միայն զգալ զծանրուն աղետից
մերոց և հերձուլ զսիրտ մեր տրտմութեա, այլ
ամ Հանիւք Հանալ և Հայրենասիրական հոգւով
գուն գործել դարման ինչ մատուցանել վիրայն՝
զոր պատճառեալ են 'ի մեզ շղթայք գերութե
մերոյ։ Հետևեսցուք օրինակի Հայրենասէր և
ազգասէր Հայկազանցն՝ որք 'ի զանազան ժա-
մանակս մատուցեալ են ըստ կարեաց իւրեանց
զդեղ յաւուց մերոց հասարակաց։ Հետևեսցուք
և օրինակի նոցա՝ որք մինչև այսօր ընձե-
ռեն զօգնականութիւն իւրեանց 'ի կանգնումն
ազգին մերոյ և 'ի վերանորոգութիւն նախ-
նի պատուոյ և փառաց նոցա. յորոց աշխա-
տասիրութեանց դոյզն ինչ պտուղք երևին,
բայց տակաւին ոչ են տարածեալ առ ընդ-
հանուր ազգս Հայոց։ ուստի հարկ 'ի վերայ
որ կայ Հանալ զայնպիսի հնարիս բուռն հար-

կանել, և զայնպիսի յառաջադրութիւն առնել, որով գիտութիւն և քաղաքականութիւն տարածեսցին առ ազգս մեր ընդհանրապէս։ Ասդարև, պատուելի համազգիք իմ, առարկայ յառաջադրութեանս զոր ընդհուպ ունիք տեսանել՝ է կարի դժուարին վասն այժմեան կացութեան ազգին մերոյ. բայց և այնպէս ոչ է միանգամայն անհնարին. քանզի ամենայն ինչք՝ որ դժուարին և անհնարին երևեսցին մարդոյ դիւրին և հնարաւոր են Աստ. որ գիտէ օգնել բարեպատեհ և օգտաւիթ գործոյ արարածոյ իւրոյ. և ջիւք ինչ դիւրաւարին, որում ոչ կարիցեն յաղթել մարդիկ անընդհատ աշխատութեամբ և միաբանութեամբ։ և եթէ կամք բազմայ 'ի մերազնեայ հայրենասիրայ միասին, ոչ եղիցի դժուարին 'ի գլուխս տանիլ գայս յառաջադրութիւն։ Ունիմք մեք զգեղեցիկ օրինակս յաջողութեան Բրիթանացիս. որք հայրենասիրութեամբ և միաբանութեամբ չքեղացեալ՝ պայծառափայլ փայլին այսօր իբրև զարեգակն 'ի մեջ աշխարհի։ Բազումք յայսոցիկ ազնուամիտ և վսեմահոգի արանց՝ ոչ շատացել Եւրոպական գրագիտութեամբ և լեզուագիտութեամբ՝ 'ի բազում ամայս հե-

տէ սկսեալ էն ուսանիլ զպէտպէս բարբառս
Ասիայոց, և խուզողական հետաքրքրութիւն
հեռաւորեալ և ի խնդիր լինել գիտութեանց
ի շրեմարանս արևելեան լեզուաց. և այն-
պիսի յաջողակութեամբ յառաջացեալ էն ի նոյն
ուսմունս, մինչև ի բարբառս Եբրայեցւոց,
Սանսկրիտայ, Արաբացւոց և Պարսից թարգ-
մանութիւնս առնել և մատեանս շարագրել.
որպէս ահա՛ ակներև տեսանեմք ի Հնդկաս-
տան զպէտպէս գիտուն և զհասարակաօգուտ
միաբանութիւնս հաստատեալ ի նոյունս, և
զբազում երևելի ճեմարանս և զդպրոցս ի
տարածումն քրիստոնէութեան, ուսման և քա-
ղաքականութեան։ Ի մեջ բազմաց՝ զառաւել
երևելին և գերագոյնն միայն է ինձ ախորժ-
ելի յիշեցուցանել սատանօր. այն է՝ Ասիա-
կան Միաբանութիւնն որ ի Բանգալա, հաս-
տատեալ իբրու երեսուն ամաց յառաջ Անգ-
ղիայի բնակչաց Կալկաթայ. որոց բարեյիշա-
տակ և գերիմաստ նախագահն՝ Սըր Վիլի-
էմ Ջոնս՝ քաջայայտ է ամենեցուն սակս խոր-
ին գիտութեան և բազմամեայ ամենակիրեայ գրա-
ւորական աշխատասիրութեան իւրոյ. որոյ շքեղ
գրչակին և միւս անդամք միաբանութեան հե-

տևէլով՝ արտադրեալ են մինչև յայսօր զբաղում կենցաղագուտ և զարմանալի գործս, և յաւելեալ են 'ի մթերս իմաստութեան զբաղում պատուական ակունս և զանապատելի գանձս գիտութեանց։ Թողում ասել և զանհամար երևելի միաբանութիւնս, համալսարանս և ճեմարանս Եւրոպիոյ, որոց լինելոյն և օգուտքն քաջայայտ են ամենայն քաղաքական ազգաց։ Ասդ՝ ընդ այսու բարեյաջող և քաջալերական պարագայիւք, եթէ ոմանք 'ի մեծատուն և յերևելի մերազնէից մինչև յարգդեալ էին առ Բրիթանական վասն օգնականութեան, ոչ ապաքէն յօժարակամ ճեմարան մի հաստատէին նք 'ի մայրաքաղաքին իւրեանց՝ 'ի Լոնդոն, սակս հրահանգութեան և օգտի մանկանցն Հայոց. հաւատամ անտարակոյս, զի եթէ ոմանք 'ի պատուելի Հայկազանց լեալ էին յորդոր կամ պաճառ 'ի հաստատութիւն այսպիսի կենցաղագուտ վարժատան, ոչինչ խափանանք արգելել ունէին զյառաջադրութիւն նոցա. քանզի Անգղիացիք գոլով մարդասէրք, ուսումնասէրք և բարեսէրք՝ յօժարութեամբ և սրտի մտօք ունէին ձեռն տալ և նպաստամատոյց լինել ան-

տերունչ վտարանդեալ անօգնական քրիստոնեայ հոգեպարց իւրեանց։

Իսկ արդ՝ որովհետև ոմանք 'ի նախնեայ մերոյ ոչ դադարեցան առնել զամենայն ինչ ըստ կարեայ իւրեանց յօգուտ և 'ի բարութիւն մերազանց, բայց ոչ եղեն ձեռնհաս առ 'ի լինիլ պատճառ հաստատութեան Հայկեան Ճեմարանի մերոյ Անգղիա, ահա՝ սիկ Անգղիացիք 'ի գութ շարժեալ 'ի վերայ ազգային թշուառութեան մերոյ յօժարին ձեռնամուխ լինիլ 'ի հաստատութիւն այսպիսի բազմաօգուտ վարժատան, եթէ մեք ոչ լցեմք անյօժար նկրտիլ յօգուտ ազգի մերոյ։ Որպէս լուեալ իսկ է՛ք, զի Հենրի Դրամմոնդ ասպետ՝ սեղանաւոր Լոնդոնայ, Զան Բէյ-Ֆօրդ ասպետ՝ գործակալ բժշկայ Հասարակայ՝ որ 'ի Լոնդոն, և ատենագիրքն Բրիթանական և այլազգական դպրոցայ՝ որ 'ի Լոնդոն, արարեալ են արդէն զբազում մարդասիրական գործս, հաստատեալ են զբաղում պիտանի վարժարանս յօգուտ պէտսէս ազգայս, և ունին 'ի մտի հաստատել զՀայկեն Ճեմարանն մի 'ի մեծաշուք և յոգաստ մայրաքաղաքին 'ի Լոնդոն, վասն հրահանգութեան և կա-

տարեալ ուսման մանկանցն ազգին Հայոց։ Սոքա
ունելով 'ի միտս իւրեանց զայսպիսի բարի և
օգտաւէտ խոկմունս, և տոգորելով զմիտս
իւրեանց փառօքն Աստ և բարեկամութեամբ
առ ազգ մարդկան՝ ուղարկեալ են յԱնգղիս
ոյ զյարգելի Պարոն Զօզեֆ Ալուլֆն 'ի քա-
ղաքութիւն Հրէից քնակելոց 'ի Պաղեստին և
'ի Պարսիս, միանգամայն և յաղագս հաստա-
տութեան դպրոցաց 'ի սէսպէս քաղաքս յա-
գուստ ամենայն ազգաց։ որպէս և սա հաստա-
տեալէ զուսումնարանս 'ի Հալապ, 'ի Բասս-
րայ և 'ի Բուշեռ ընդ հովանաւորութեամբ
և օգնականութեամբ Բրիթանական տեղակա-
լաց։ և նոյնգունակ ունի 'ի մտի իւրում հաս-
տատել զդպրոցս՝ ուր ուրեք և ձեռն հասցէ.
այսինքն՝ 'ի Զուղայ, 'ի Թաւրէզ, Յերևա-
ն և յայլ սէսպէս տեղիս։ Սա մեծաւ յուս-
ադրութեամբ, յորդորանօք և քաջալերութիւ
խոստանայ՝ որպէս և քաջայայտ երևի 'ի Թղ-
թոյ նորա, զի մինչնորդութեամբ, օգնականու-
թեամբ և գործակցութեամբ բարեկամայ իւրս
ոյ ունի օգնել մեզառ 'ի հաստատել զՀայս
կեան Հեմարան մի 'ի Լոնդոն վասն հրահանգ
ութեան սերնդոյն Հայկայ. յորում ուսուցա

ցեն զամենայն ազատական արհեստս և զվաստ-
մաշուք գիտութիւնս։ Եւ վասն կրթութեան
քրիստոնէական կրօնի մերոյ ըստ անստերիւր
կանոնացն Եկեղեցւոյն Հայաստանեայց, ունին
տանիլ անդ ընդ աշակերտաց զոմանս 'ի մեր-
աղնեայ եկեղեցականաց՝ որք կատարեսցեն ան-
դանօր զծային պաշտօնն 'ի բարբառ և 'ի
ձեռս Հայաստանեայց սուրբ Եկեղեցւոյն, ուստ
յանհաւատ Պարսիստան և յերկրին Հեթա-
նոսաց՝ 'ի Հնդկաստան ունիմք մեք զեկեղե-
ցիս և զքահանայս մեր. զի մի մանկունք մեր
խորթանայցեն յազգային և յեկեղեցական սո-
վորութեանց մերոց։

Ուվսերելի և պատուելի ազգա-
կիցք իմ, աղաչեմ ստանօր մտադիր լարգոյն
ուշադիր լինիլ բանիս, և Հայրենասիրական
հոգւով Հայիլ յամենայն պարագայս յառա-
ջադրութեանս այսորիկ, և 'ի մեծամեծ օգ-
տառիթ հետևանս՝ որք ունին յառաջագաղ
'ի հաստատութենէ այսպիսի Ճեմարանի մի-
ոյ. աղաչեմ մի՝ հարևանայի ընթեռնուլ զբանս
մեր, այլ ունելով զօգուտ ազգին 'ի սիրտս
ձեր՝ ազգային հոգւով ընթերցէք զայս, և
ազգային հոգւով ընթայարուք։ Տեսէք, թե

զիրքան ոտուղղ խոստանայ մեզ այս բազմա-
օգուտ յառաջադրութիւն. և խորհեցէք թէ
զիրպիսի առատ հունձս ունիմք վայելել 'ի
վերջոյ։ Երկիրն Բրիթանայոց է բարեխառն
և ազատ. բնակիչքն պայծառ և քաղաքական,
կառավարութիւնն արդար և ազատական. գի-
տութիւնքն են ծաւալեալ և ընդհանրական.
արհեստքն յաճախեալ և դիւրագիւտ։ Անդա-
նօր մանկունք մեր կարեն ազատաբայլ ընթա-
նալ 'ի Աստուածարան ուսմանց. անդանօր ման-
կունք մեր ստասցին զկատարեալ գիտութիւն
Աշխարհագրութեան, զվարեմախոհ և զհայրենասի-
րական խոհմունս, և զքաղաքավար զծածան-
ծոյ վարս. անդանօր սերունդքն Հայկայ լմ-
ընելով յաճախ յաղթերէն ազատութեան և
ստանալով զազատակամ և զազնուական միտ՝
զգասցեն ստատկապէս զցաւս և զաղետս, ՇՇ
որովք համազգիք իւրեանց խորդան 'ի գերութ.
զգասցեն զթշուառութիւն ազգային, եթէ
զթշուառութիւն անձին. զգասցեն զայն արդարև
և յաւուր միում դիմագրաւ հանդիսանալով
քաջութեամբ ջանահնար լինին բեկանել զծանր
շղթայսն որովք եթէ 'ի հինգ հարիւր ամաց
հետէ կապեալ կաշկանդեալ ոտառ ապին ոտա-

բաբաղդ Հայկազունքն. զգասցին զայն անտա-
բակոյս, և անվեհեր արիութեամբ նկրտեսցին
կորզել զՀայրենիս մեր 'ի պղծութենէ այլա-
դենից և բարբարոսաց, և զեկեղեցիս մեր յա-
բատաւորութենէ ժանտ Մահմետականաց։
Արժան է մեզ յուսալ զի հաստատութեամբ այս-
պիսի ազգասիրաց Հեմարանի 'ի Լոնդոն՝ ոչ
միայն պտուղք ուսման առաւելսին և տարածեա-
ցին 'ի մերում երկրի, այլ և կենցաղագուտ
և արժանաւոր մատեանք նախնեաց մերոյ՝ որք
այժմ փոշոտեալ թագուցեալ կան 'ի մթան և
յանյայտութեան՝ տպագրութեամբ 'ի լոյս ընծայ-
եսցին և դիցին 'ի վերայ աշտանակի. որ-
ով ընդհանուր ազգ մեր ունին զլուսոմն զմայ-
լիլ և մխիթարիլ։ Որ-ը թողցուք և զայս,
զի գուցէ տերութիւն Անգղիայոց ինամակա-
լու լեալ 'ի վերայ տառապեալ ազգին մերոյ,
տայցէ զպատուաւոր պաշտօնս, որպէս և
պետութիւն Ռուսաց տայ անխտիր։ Բայց Անգ-
ղիա է ազատ և օրինաւոր երկիր, և Ռու-
սիա է ենթակայ իշխանութեան ինքնակամ թա-
գաւորի։

'Ի վախճան բանիս մնայ այժմ
գիտել մեզ, թէ զինչ պարտիմք առնել. այս

է կարծիք նոճաստութեան։ Նախ՝ յամենայն քաղաքի մերազնեայքն ժողով արասցեն վասն այսր յառաջադրուեն. և 'ի ժողովի անդ ընտրեսցին վերակացուք, գանձապետք և դպիրք. որք փոյթ յանձնին կալցեն ժողովէ զգրաւս և զտուրս օգնականութեան։ Երկրորդ՝ ուրուեք միաբանեալ լիցեն առ այս վախճան, համապատասխանատուութիւն ծանուսցեն միմեանց զորպիսութի իրայն, և ջանասցեն յառաջայուցանել զայս յառաջադրութիւն մեծ և ազգաօգուտ։ Երրորդ՝ կարգեսցեն ընդհանրական տեղակալս 'ի Լոնդոն՝ զՊարոնայս Հէնրի Դրամէնդ՝ սեղանաւոր Լոնդոնայ, Ջան Բէյֆօրդ կամ Ջէմս Միլլար՝ ատենադպիր Բրիթանական և այլազգական միաբանութեան դպրոցայ՝ որ 'ի Լոնդոն։

Հուսկ ամենայնի ջնայ ինձ զայլ ինչ ասել, եթէ ոչ յանկալով յամ սրտէ իմմէ տեսանել զայս յառաջադրուն 'ի գլուխ ելեալ՝ եղէ, եմ և եղիցի յարգուն ձերում։

Ամենախոնարհ Ծառայ՝
Մարտիրոս Միրզայ Դաւթեանց։
'Ի Հիրազ, 'ի 1 Յունվարի, 1825։

Եւ լմնապատնեաց ծագէսցին իւրեւ զլուսաւորութիւն ի հայապատութիւն. և Էաղրամտ յարքարոյ իւրեւ զաստուծոյ յուսիպեանս՝ և Լուս Դոն. գլ. ԺԲ. համ. 3։

ԲԱՆ

'ի Պարոն Յովհաննիսէ Ալվազեանց

Առ պատուելի համազգիս իւր, յաղագս Հայկեան վերոյասացեալ Հեմարանին։

Հայր. մեծաւ բերկրութիւն և քարեհաճութիւն առաջի առնեմ ձեզ զթուղթս յարգելի Պարոն Զօսէֆ Ալուլֆին, և զյորդորական թուղթ Պարոն Մարտիրոսի Մ. Դաւթեանց, յաղագս հաստատութեան Հայկեան Հեմարանի միոյ 'ի Լոնդոն 'ի պէտս հրահանգութեան հայասեռ համբակաց. և հաւատի եմ զի ըստ բնատուր ազգասիրութեան ձերում ունիք ընթեռնուլ զնոսա ուշանման բերկրութիւն. այլ սակայն որքան առաւել լիցի ուրախութիւնս մեր ամենեցուն, 'ի տեսանել զայսպիսի բազմաօգուտ յառաջադրութիւն 'ի գլուխ ելեալ։

Այլարդ թեպետ և վերոյասացեալ յարգելի Պարոն Զօզէֆ Ալուլֆին

աւետարանական հոգւով լիուլին բայատրել զՀանդամանս յառաջադրեալ Հայկեան Հեմարանին, և յուսեալ է զբաղում օգուտս՝ զորս ազգ մեր ունին քաղել յայսպիսի յառաջադրութենէ, և թէպէտ և յորդորական բանք Պարոն Մարտիրոսին ըստ բաւականին ազդուական են առ 'ի զարթուցանել 'ի սիրտս մերազանց զփոյթ հաստատութեան այսպիսի Հեմարանի, սակայն և այնպէս չէ՝ անդեպ ինձ և սակաւուք յայտնել զիտնարհ խոկմունս մտայ իմոյ, և մանաւանդ յիշատակել զայնպիսի բանս որք ոչ գտանին յիշատակեալ 'ի թուղթս վերոյասացեալ Պարոնայ։

Արդարև՝ պատուելի համազգիք իմ, յառաջադրումի հաստատելոյ զՀայկեան Հեմարան մի 'ի Լոնդոն՝ է այնպիսի յառաջադրութիւն՝ որ խոստանայ զանչափ օգուտս և զանչափ բարուն տառապեալ ազգին մերոյ. յառաջադրումի մի ասեմ՝ որով լոյս աւետարանական և գիտնական ուսմանց հառագայթել ծագեսցի 'ի խոնաւ եղերայն Թամեսի յազնիւ քաղաքին՝ 'ի Լոնդոն, մինչև 'ի յարդաւանդաւոր և 'ի լայնարձակ դաշտս Արարատայ. յառաջադրումի մի ասեմ՝ որով ապագայ սե-

ըունդքն Հայկայ զարգացեալ և զօրացեալ ՝ի սէր ԱՅ, ՝ի սէր հաւատոյ և ՝ի սէր հայրենեաց՝ քաջութիւն դիմագրաւ լեցին առ ՝ի վայր իջուցանել զմահիկն Մահմետի և ՝ի վերս ամբառնալ զսուրբ խաչն փրկական. յառաջադրուեր մի իմն՝ զոր ամենայն Հայ պարտի ՝ի սրտէ ցանկալ յառաջացուցանել՝ և որոմ ամենայն քրիստոնեայ մարդասէր պարտի մատուցանել զիւրն օգնականութիւն։

Ժամանակ մի գոյր, սիրելի հաղորդիք իմ, յորժամ բրտուն և տգիտուն թագաւորէին առ նախնի Հելլենացիս. քայց սակայն երևեցան ՝ի միջի նոցա վսեմախոհ արքունանք, որք կամելով ուղղել զազգային բրբտութիւն իւրեանց՝ գնացին յԵգիպտոս վասն ուսման. որ յայնժամ էր պալլադիոնն գիտութեաց և բարոյական իմաստութեան։ Սոքա էին Թաղէս, Սոկրատէս, ևն. որք դարձ արարեալ յԵգիպտոսէ՝ և կարեկցեալ ՝ի վերայ բրտուն համակրեալ իւրեանց՝ բայց նոցա զհանքս բարոյական փիլիսոփայութիւն, զոր բարձեալ բերեալ էին՝ ՝ի Յունաստան։ Եւ այսպէս կրնուելով նոցա ընդ նախապաշարմանց Յունաց և ցողեցուցանելով ՝ի միտս նոցա զողջամիտ և

զբարի խոկմունս՝ բարեգործեցին զվիճակնն, և մուծին զքաղաքականուն՝ ի Հայրենիս իւրեանց։ Սոյնմանն ազգային օգուտք կան ահա։ սասիկ առաջի մեր. բուռն հարցուք զայս օգտաւոր թարգմանութիւն, և ահա նոյն պիսի մխիթարուն՝ եթե չիցէ մեծագոյն՝ վիճակեսցի Հայաստանի, զոր երբեմն վայելէր քոյր նր Յունաստան։ Հայկազուն մանկունքն գնալով՝ ի Հայկեան Հեմարանն՝ ի Լոնդոն, և ձգելով՝ ի հոգիս իւրեանց անդանօր զառաւօտեան յօրն իմաստութիւն՝ դարձցին՝ ի Հայաստան հոգեպարար հարստութիւն. և տեսնել՝ ի համազգիս իւրեանց զբարոյութիւն անգրագիտութիւն և զայդերջանիկ կայութիւն նոցա՝ շնաստեն՝ ի բաց քերել՝ ի նոցանէ զնախապաշարմունս նոցա, և մուծանել զքաղաքականուն և զպատուն յարգաւանդահող և երբեմն յերջանիկ ձորս Արարատայ։

Ժամանակ մի գոյր, պատուելի համազգիք իմ՝ յորժամ Հայաստան մերկայեալ զրկեալ՝ ի փառաց իւրոց, որդիք իւր ազատազգիք վանեալ գերեցան՝ ի Պարսից զորեն երամակաց անհոլիւ ոչխարաց. յայսմիկ դառն ժամանակի ասեմ՝ ծագեցան վերապատ-

ռելի եպիսկոպոսն Սարգիս և քարեզպաշտն տեր Կիրակոս՝ արք լուսաւորեալք ՅԱՅ. որք շարժեալ հոգւով Հայրենասիրութեան՝ հատատեցին 'ի Հայաստան զքաղաքամարդպրոյս յոգուտ և 'ի միխիթարութիւն տառապեալ հայազգեայ իւրեանց. որով և մեծապէս հոգի առեալ զօրայն ըստ հոգևորական կենաց։ Բորբոքեալմեր հրով գերազանց օրինակի սՅ՝ ո՞չ է արժան ջանալ ըստ կարեաց մերոյ թեթև եղուցանել զբեռն տառապանաց 'ի պարանոցէ ազգին մերոյ, օգնելով և 'ի գլուխ տանելով կայս յառաջադրութիւն հատատելոյ զՀայկեան Հեմարան մի 'ի Լոնդոն։

Որվստուերքդ Թաղեայ և Սոկրատայ, ազդեցէք 'ի սիրտս սերնդոյն Հայկայ զնոյն կիրս ուսուցնասիրութեան. վառեցէք 'ի խորս արտիոյ նոցա զհուր իմաստասիրութեան. յորդորեցէք զնոսա հետևիլ պանծալի օրինակի ձերում. ուսուցէք զնոսա մի ամօթ համարիլ առ 'ի ուղղել զպակասութիւն նոցա, դիմելով վասն ուսման 'ի Բրիթանիա. որ երբեմն էր յայնպիսի կայսրութեան՝ յորում կայ այժմ Հայաստան, և ուսանելով զվսեմափայլ գիտութիւն 'ի Բրիթանացւոց՝ որք երբեմն էին յայն-

պիսկ պարագայս՝ ոչ Հայկազունքն են այժմ։ Դիմեցէք առ Բրիթանայիս, ով համարձիք իմ, նոքա են քրիստոնեայք և ազատք. նոքա օգնեսցեն ձեզ նպաստաւորութիւն իւրեանց. նոքա երբեմն էին նման մեզ ապերջանիկ և անշուք. երկիր նոցա ծածկեալ էր մթութիւն, և թխպայորդ մթութիւն ծածկեալ էր զժողովուրդս երկրին. սակայն զօրութիւն նոցա եհեղ ի նոսա զբաւական փրկութեան։ Հետևեցան նոքա լուսոյ գիտութիւն. տեսին թէ ուր դնի կարողութիւն իւրեանց. և խորտակեցին զշղթայս բռնաւոր յաղթահանայ իւրեանց։ Արդ զի՞նչ ազգ առաւել իմաստուն, զի՞նչ ազգ առաւել փարթամ և բարերար, զի՞նչ ազգ առաւել հզօր, առաւել ազատ և առաւել աներկիւղ, քան զերջանիկ ժողովուրդս Բրիթանական կղզեաց։ Օրինակեցէք զօրինակ նոցա, և հետևեցէք ոլանծալի գաղափարի նոցին։

Ով ատուերբդ Սարգսի և Կիրակոսի, որ ՝ի մրրկածուփ թխպապատ ժամանակի և ՝ի բարբարոս երկրի ոչ դանդաղեցայք մեղմել զաղէտս մեր հաստատակաց և օգնել մեզ յապերջանիկ և ՝ի գիշերապետալ կացութիւն մերում, ՝ի ձեռն հաստատութիւն կենա-

ցաղօգուտ դպրոցաց, լուցէք զՀայրենասիրութիւն ձերոյ 'ի հոգիս մեր, որք եմք 'ի խաղաղ և յազատ տէրութիւն. առ 'ի նոր ի-ջել զինչս և զպատահարկուիս մեր 'ի հաստատութիւն այսորիկ բազմաօգուտ Ճեմարանի 'ի մայրաքաղաքին Անգղիոյ 'ի միայնակ յերկրին Ճշմարիտ ազատութիւն։ Զարթուցէք զմեզ 'ի մահահնոցն քնոյ թմբիրուն, առ 'ի արթուն մնօք նկրտիլ վասն ազգի, կեալ վասն ազգի, և մեռանիլ վասն ազգի։

Թերևս ոմանք 'ի մէնջ պատճառս 'ի մեջ բերելով ասիցեն, թէ ահա՛ ունիմք աստանօր զՃեմարանն Մարդասիրական, որ գոլով նորոգ միաւորեալ ընդ Հայկեան Ազարժարանին, բայց է վասն ընդունելութիւն և հրահանգութիւն մանկանցն Հայոց. և զի՞ պիտոյ է մեզ ևս հաստատել զՀայկեան Ճեմարան մի 'ի Լոնդոն։ Այսմ պատասխանիմ, թէ արդարև վայելեմք աստ զօգուտ ուսումնարանի միոյ 'ի Կալկաթա. բայց համեմատելով զայս զպարագայս և զուսմունս սորին ընդ յառաջադրեալ Ճեմարանին 'ի Լոնդոն՝ յոյժ հեռի եղիցուք ունիլ զայսպիսի կարծիս. քանզի աստանօր մանկունք մեր մի-

այն ուսցին զայն ամ, որ հարկաւոր է առ 'ի հոգալ զհարկաւոր պիտոյս իւրեանց. իսկ անդանօր ուսեալքն այնքան կատարեալ եղիցին, մինչ միտ դնիցեն հոգալ զպիտոյս հասարակաց և զհասարակաց բարին։ Նա և օգուտքն Մարդասիրական Ճեմարանին մնասցեն միայն 'ի Հայկազուն բնակի չեն Հնդկաստանու. իսկ օգուտքն Լոնդոնայ Ճեմարանին հասցեն և ներգործեսցեն 'ի սիրտ հայրենի աշխարհին մերոյ. նա զի՝ ուսումնարան տեղւոյս եղիցի իբրև հանդերձիչ դպրոց, յորում մանկունք մեր զկնի ուսանելոյ զնախակրթութիս ուսմանց՝ կարեն գնալ 'ի Ճեմարանն Լոնդոնայ, առ 'ի ստանալ զկատարեալ և զազատական ուսումն։

Գուցէ ոմանք ևս դժուարին համարելով զայս յառաջադրուն ասիցեն, թէ պիտոյ է մեծ գումար դրամոյ վասն հաստատութեան այսպիսի Ճեմարանի, և թէ չէ հնար դիւր ու հաւաքել զբաւական տուրս և զգնականուն յազգէն Հայոց, ըստ սակաւաթիւ Հայկազուն բնակչացն Կալկաթայ։ Այսմ պատասխանեմ, թէ արդարև անհնար եղիցի 'ի կատար հասուցանել զայս յառաջադրութիւն, եթէ ընչեղքն 'ի միջի մերում ոչ բանայցեն

զքսակա առատաձեռնութեան իւրեանց առ 'ի հաստատութիւն այսպիսի մեծագործ և պիտուան առարկայի։ սակայն ընդ հակառակն եթէ միակամ նպաստամատոյց լիցին առատաձեռն տրովք իւրեանց, կարող լիցին հաստատել ոչ միայն զՀեմարան մի 'ի Լոնդոն, այլ և զմիւս մի ևս 'ի Փարեզ։ և ոչ այսչափ միայն, այլ և մի միայն հարուստ և պատուելի անձն 'ի մէջի մերում, (փա՛ռք աստուծոյ բարերարին) կարող է իւրով իսկ տրովք և ծախուք 'ի գլուխ տանել զայս յաղագս աղրուի, առանց կարօտելոյ օգնականութեան այլոց։ Ոչ ապաքէն եղիազարեան Հեմարանն 'ի Մոսկով, է վկայութիւն և մեծ ի մն վկայուն բանից իմոյ։ Այլ սակայն Մոսկով է 'ի սահմանս տէրութեանցնակալ թագաւորի, որոյ կամքն է օրէնք։ Իսկ Լոնդոն է մայրաքաղաք օրինաւոր և կարգադրեալ տէրութեան որոյ թագաւորն իսկ հպատակ է օրինայ երկրին։

Զեն ինչ զարմանք, զի ոմանք յառաջեալ որդեսէր և 'ի խանդակաթ ծնողայ հաստատեսցին ընդ այս օգտաւէտ յառաջադրութիւն, բայց զարգել ինչ 'ի մէջ բերեալ սասցեն, թէ ինչ սիրտք մեր զօրեսցեն բա-

ժանել զմանկունս մեր 'ի մէնջ, և առաքել զնոսայնպիսի հեռի և յօտար աշխարհ, ուր ոչ գոն ծնողք և ազգականք առ 'ի զգուշանալ և խնամն ունիլ 'ի վերայ առողջութեան և վարուց նոցա։ Որչ ապաքէն Հնդկաստան, որչ ապաքէն Եգիպտոս, որչ ապաքէն Պարսիստան, որչ ապաքէն Տաճկաստան, որչ ապաքէն Մոսկով են օտար աշխարհք վասն մեր։ Մի թէ չեմք մեք ամենեքին տիրապէս օտարականք և պանդուխտք 'ի վերայ երեսաց երկրի. ապա ընդէ՞ր ոչ ընտրեսցուք զբարեգոյնն և զազատագոյնն քան զայմ երկիրս. որպէս մեք արդէն ընտրեալ եմք վասն բնակութեան մերոյ զբազում երկիրս, որոց ի շխանքն են բռնաւորք, և որոց տեարքն են այլակրօնք և անհաւատք։ Այլ սակայն խոստովանիմ, թէ բնական իմն է ամենայն ծնողաց ունիլ զայսպիսի յանկութիւն և զկարծիս յաղագս մարմնաւոր բարեաց որդւոց իւրեանց. և եթէ այսքան ըղձակաթ իցեն առ 'ի ապահով կացուցանել զառողջութիւն նոցա ըստ մարմնոյ, ապա որքան առաւել պարտական են խնամոտ լինիլ սակս բարօրութեան և երջանկութեան նոցա ըստ հոգւոյ, արդարև այնքան առաւել պար-

տին հոգալ յայսմ մասին, որքան առաւել է հոգի քան զմարմին, և որքան յարգոյ են հոգեկան բարիք քան զմարմնականս։ Աղաչեմ զայսպիսի ծնողս նկատել զծնողական խնամս դրացեալս մերոյ, զաղնուական և իմաստուն Անգղիայի բնակչայն ասեմ Հնդկաստանու. որք մինչչև իսկն տեսեալ զքաղաքրիկ մանկունս իւրեանց հաստեալ 'ի հասակ եօթն ամաց, բաժանեն զնոսա 'ի լանջաց իւրեանց, և բարձեալ 'ի նաւս՝ ուղարկեն զնոսա առ տեղին գիտութեան վասն հոգեկան բարեաց նոցա. եթէ սոքա՝ որք են ազատք և կարող են ատ և հրահանգել զմանկունս իւրեանց՝ եթէ կամին՝ այսպէս առնեն, ապա որքան առաւել մեզ պարտ է զնոյնն կատարել. որք ոչ եմք ազատք և ոչ կարեմք ատանօր հրահանգել զմանկունս մեր յայնպիսի ազատական ուսմունս, ոչ նոքա առնեն յԱնգղիա։ Թողում յիշեցուցանել և զայս, զի մանկունք եղիպին առաւելուժեալ 'ի կազմուածս մարմնոյ իւրեանց, հնազանդք ծնողական իշխանութեան, առաւել բարի և իմաստուն ժառանգք և պիտանայու անդամք ազգի, յորժամ զոսկեն զուսումն յերկրին Անգղիոյ և հեռի 'ի տեսութենէ

ծնողաց իւրեանց, քան թէ 'ի տան իւրեանց և առաջի երեսաց նոցա. և այս քաջայայտ է ամենեցուն, որք հայեսցին շուրջանակի մտադրութեամբ և քննութեամբ, և խորհեսցին զանշքայելի վիճակս բազմաց գերդաստանաց բնակելոց 'ի Կալկաթա, որք երբեմն էին փարթամ և երևելի։ Եթէ տուեալ էր նոցա զօրինաւոր և ըզկատարեալ ուսումն մանկանց իւրեանց, յի շատակք նոցա առաւել քաղցրագոյն և ախորժելի լինէր քան զանուշահոտութիւն նորաբաց դեռափթիթ վարդոց. և նոքա ունէին վերստին կեալ յաւիտեան յառաքինագարդ կեանս ուսեալ և բարեբարոյ մանկանց իւրեանց։

Ահա, պատուելի համազգիք իմ, լիուլի բայատրեցաւ հարկաւորութիւն այսպիսի Ճեմարանի, և լիուլի ցուցան անթիւ օգուտքն՝ որք ունին ծնանիլ անտի համօրէն ազգի մերում. ահա պարզապէս յայտնեցաւ հնարաւորութիւն հաստատելոյ զայս պիտեան Ճեմարան, միակամ և ազգասիրական օգնականութեամբ Հայկազանց, և մարդասիրական նպաստաւորութեամբ և գործակցութեամբ Բրիթանացւոց. ահա բայերև հաստատեցաւ 'ի վերոյ, թէ չինք և չինք ինչ խափանանար 'ի գլուխս տանելոյ զայս ազգաօգուտ յառաջադրութիւն, եթէ

հայրենասիրական, դիւցազնական և մեծագործական հոգւով վարեսցուք, և եթէ ոչ լինիցիք անփոյթ զբարօրութեանէ երկրին մերոյ, և թշնամիք հայրենեաց և վերանորոգութեան ազգի մերոյ։ Մինչ Յոյնքն զարթուցեալ ՝ի թմբրութենէ դերութենէ իւրեանց՝ պէսպէս քաջասիրտ գործովք արութեան նկրտին փրկել զինքեանս ՝ի ստրկութենէ Մահմետականաց, չէ պարտ մեզ յետնորդ գտանիլ առ ՝ի բարեգործել զվիճակս մեր, և վերանորոգել զփառս երկրին մերոյ։ Մինչ այսքան օգուտք և բարութիք յանդիման երևին աչաց մերոյ, և երբ տեսանեմք ՝ի մեզ զկարողութիւն և զընդունակութիւն վայելելոյ զնոյն պտուղս բարեաց, փոյթ յանձին կալցուք միասիրտ միակամ հաստատել զայս կենսաբերուստ Ճեմարան ՝ի Լոնդոն։ Վառեսցուք զմեզ սիրով նախահարց մերոյ, որք ոչ խնայեցին զինչս և զանձինս իւրեանց զոհ նուիրել հասարակաց օգտին. վառեսցուք զմեզ ՝ի սէր ազգին Հայոց՝ քանզի մեք եմք Հայք և զտառապեալ վիճակ նոցա բարեգործեսցուք։ Վառեսցուք զմեզ ՝ի սէր հայրենեաց, և զպատիւ նորա վերանորոգեսցուք. վառեսցուք զմեզ ՝ի սէր հաւատոյ և քրիստոնէական զարհուն իւր վանս փրկութեան մերոյ՝ և

սրբեսցուք զՆեկեղեցի նոր յարտասուս ի՝ պղծուէ այլակրօնից։ Որ՝ ապաքէն ողբամք վա՛ յայր անշքութեա՛. և ո՞՛չ է ողբայեալ վասն սորա գերապանծ ի՛շխանն տաղաչափիս մերոյ Ներսէս շնորհալին։

Եւ՝ ի սեղանն՝ ճծային,
ուր միշտ զենոյր՝ գառն երկնային.
Հարձլա նստոյց՝ երգել՝ ի նմին,
և գինեբերեաս՝ ըստ հերովդին։

Յողբն Եդեսիոյ, տեղ 56։

Եկայք, եղբարք և համազգիք իմ, եկայք՝ ի միասին, և միաւորեսցուք զմեզ՝ ի սիրոյ՝ երբեւ՝ ի սիրտ միոյ մարդոյ, առ՝ ի միախորհուրդ՝ ի գլուխ տանիլ զայս յառաջադրութի՛ն. և հաստատեսցուք զՀայկեն ձեմարան մի՝ ի Լոնդոն։ Առնելով՝ ձեր զայսպիսի մեծագործութի՛ն, Թողջիք ժառանգայ ձերոյ զբարեգոյն և զանապառելի ժառանգութի՛ն, քան զգանձս հարստութե՛՝ զոր ցեցք և ուտիճք սպականեն և գողք ական հատանեն և գողանան։ Թողջիք հայրենեաց ձերոյ զհրիտակ ճնաշխարհիկ. և Թողջիք յաշխարհի զանմահական և զանջնջելի յիշատակ, յամենայն ազգի և յամենայն ժամանակի. և ինկաւեալ բուրումն անուշահոտութեա՛ բազձրասցի՝ ի տաճարս մեր առ՝ Հայրն Ա՛ծ.

առ Որդին ԱՍ, և առ Հոգին սուրբ ԱՍ, վՆ հանգստեան և երանութեան անմահացեալ հոգւոյ ձերոյ։ Յայնժամ Հայաստան վայելեսցէ զարդիւնս վաստակոյ և սիրոյ որդւոյ իւրոյ. յայնժամ յետագայ սերունդքն Հայկայ գովեսցին զյիշատակ ձեր և ուսկերանգ գրովք արձանացուսցին զանուն մեծագործութեան ձերոյ. յայնժամ և ապառնի պատմաբանք 'ի գրել իւրեանց զշարունակումն պատմութեան երկրին մերոյ, դասեսցին զձեզ 'ի շարս այնոցիկ լուսապայծառ անձանց՝ որք գործովք հայրենասիրութեաբ և մարդասիրութեաբ անմահացեալ են 'ի վերայ աշխարհի։

'Ի վախճան բանիս, հայցեմ 'ի ձէնջ 'ի դիմաց երկրին մերոյ և 'ի դիմաց սրբոյ կրօնին մերոյ, զի եթէ ոք կամիցէ թղթակցութիւն ունել 'ի վերայ այսր առարկայիս, թէ յանուն յարգելի Պրն Զ. Վուլֆին և թէ յանուն Պարոն Մարտիրոսին, գրեալ ուղարկեսցէ զթուղթս իւր առիս, զորս և ունիմ անթերի և ուրախութեաբ հաստատեալ առ վերոյասացեալ Պարոնայս։

'Ի Եւլոբա, 'ի 1 Յուլիսի, 1825։

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0678217

579
157

ԴԻՄԱՌՆՈՒԹԻՒՆ

Ի գիմաց մօր մերոյ Հայաստանի։

Հայկազունք

Հայկազունք՝ Հայկազունք՝ Հայկազունք՝
մայրաքաղաք՝ իմ ոգեաց՝ և քաջ սիւնք։
միաձայն՝ քաջ ժառանգք՝ գիւցազունք,
ոնց ձեր միաբ՝ ոնց իմ շուք՝ ոնց իմ սիւնք։

Հայկազունք՝ Հայկազունք՝ Հայկազունք՝
անուանի՝ հոյակապ՝ մեծատունք։
քաջալերք՝ մեծապարգ՝ և գիտունք,
ոնց ձեր կալ՝ ոնց ձեր յարգ՝ ոնց ձեր տունք։

Հայկազունք՝ Հայկազունք՝ Հայկազունք՝
միոյթ պարթևք՝ և լերանք՝ ինձ թիկունք։
տուրբ սիրով՝ տուրբ սրտիւ՝ տուրբ մանկունք,
տունք ինձ միաձ՝ տունք ինձ շուք՝ լերանք սիւնք։

Հայկազունք՝ Հայկազունք՝ Հայկազունք՝
ծախեմ ցին՝ ոսկիք ձեր՝ պապունք։
Հաստատել՝ Հեռանան՝ ի Լոնդոն,
ձեզ լմնան՝ ձեզ պատիւ՝ ինձ անուն։